ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խուրհրդի 29.05.19թ. կայացած թիվ 12.18-19 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 25-ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Լավագույն մագիստրոսական աշխատանքների ընտրության հարց:
2. Ա. Բալաբեկյանի պրոֆեսորի կոչման ներկայացնելու հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ Լավագույն մագիստրոսների ընտրության հարց:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյան: Նա ներկայացրեց "Լավագույն մագիստրոսական աշխատանք" մրցույթին դիմած 2 մագիստրոսներին՝ Աննա Այվազյանին և Տիգրան Պետրոսյանին:

Որոշեցին՝ որպես լավագույն մագիստրոսական աշխատանքնոր ընտրել Աննա Այվազյանի և Տիգրան պետրոսյանի աշխատանքները:

Լսեցին՝ Ա. Բալաբեկյանի պրոֆեսորի կոչման ներկայացնելու հարցը: Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Կիրակոսյանը: Նա նշվեց, որ միջուկային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.դ. Անահիտ Բալաբեկյանը հեղինակ է 68 գիտական հոդվածների, որոնք տպագրված են հիմնականում բարձր վարկանիշով գիտական ամսագրերում: Ա. Բալաբեկյանը ակտիվորեն մասնակցում է ուսումնական գործընթացին: Հեղինակ է 5 ուսումնամեթոդական աշխատանքների: Նա ֆիզ. մաթ. գիտ. դոկտոր է 2010 թ.-ից: Վերջին երեք տարվա ընթացքում ուսանողների շրջանում անցկացված սոց. հարցումների արդյունքում նրա միջին միավորը կազմում է 4,93:

Պարոն Կիրակոսյանը ասաց, որ մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել է միջուկային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Անահիտ Ռաֆիկի Բալաբեկյանին պրոֆեսորի կոչման ներկայացնելու համար:

Որոշեցին – Հիմք ընդունելով մրցույթային հանձնաժողովի եզրակացությունը՝ երաշխավորել միջուկային ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Անահիտ Ռաֆիկի Բալաբեկյանին պրոֆեսորի կոչման ներկայացնելու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝ Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝ Շ.Ա. Տոնոյան